ՀՀ ՆԳՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԱՐԱ ՖԻԴԱՆՅԱՆԻՆ

**Հաշվետվություն**

**ՀՀ ՆԳՆ աղետների և արտակարգ այլ իրավիճակների կառավարման վարչության փորձագետ Լիլիթ Մինասյանի կողմից 02.07.2025թ⍰-30.12.2025թ. ժամանակահատվածում կատարած աշխատանքների վերաբերյալ**

Հարգելի պարոն Ֆիդանյան,

ՀՀ ՆԳՆ աղետների և արտակարգ այլ իրավիճակների կառավարման վարչության փորձագետի կողմից իրականացվող աշխատանքային ծրագրի համաձայն՝ 02.07.2025թ⍰-30.12.2025թ. ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

Մասնակցել եմ՝

1. աղետների ռիսկի կառավարմանն առնչվող տեղեկատվության հավաքագրմանը, ամփոփմանը և վերլուծմանը, անհրաժեշտության դեպքում՝ ոլորտային ուսումնասիրությունների կատարմանը,
2. աղետների ռիսկի կառավարման ոլորտի զարգացման հիմնախնդիրներով առաջարկությունների ներկայացմանը,
3. աղետների ռիսկի կառավարման ոլորտում Նախարարության քաղաքականության իրականացման համակարգմանը,
4. աղետների ռիսկի կառավարման ոլորտում աշխարհագրական տեղեկատվական համակարգի և տիեզերահեն տեղեկատվության կիրառման հիմնախնդիրներով առաջարկությունների ներկայացմանը,
5. աղետների ռիսկի կառավարման ոլորտին առնչվող ՆԳՆ ստորաբաժանումների, շագագրգիռ պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ կազմակերպված հանդիպումներին, քննարկումներին և աշխատաժողովներին:

Իրականացրել եմ՝

1. առկա տվյալների բազայի ուսումնասիրում, մոնիթորինգ, թղթային կամ քարտեզային տեղեկատվության հստակեցում,
2. աշխարհագրական տեղեկատվական համակարգում (GIS) գեոտվյալների բազայի ստեղծում և թվայնացում,

3. սպառնացող ռիսկերի (սողանք, ջրհեղեղ, երկրաշարժ, հրդեհ, սելավ) առաջնային քարտեզագրում,
4. գեոտվյալների ամբողջական բազայի և ռիսկերի թվայնացված շերտերի պատրաստում,
5. տիեզերական պատկերների ներբեռնում՝ 20 տարվա տարածաժամանակային վերլուծության նպատակով,
6. ռիսկերի մոդելների պատրաստում՝ վերլուծված տվյալների հիման վրա,
7. ռիսկերի կանխատեսման մոդելի ստեղծում,
8. աղետների ժամանակ գործողությունների ցանկի մշակման մոդելավորում,
9. հետաղետային կարիքների գնահատման մոդելի մշակում,
10. տիեզերահեն տեղեկատվության հավաքագրում, դասակարգում և վերլուծություն:

Հարգանքով՝

ՀՀ ՆԳՆ աղետների և
արտակարգ այլ իրավիճակների
կառավարման վարչության փորձագետ Լ. Մինասյան

«30» ___12___ 2025թ.

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում

եմ ______________________________:

ՀՀ ՆԳՆ աղետների և
արտակարգ այլ իրավիճակների
կառավարման վարչության պետ Ա� Կարապետյան

«30» ___12___ 2025թ.